ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2025 թ. **N __-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՆԵԼՈՒ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումները իրականացվում են տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն)՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ներդնել Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն:

2. Սահմանել, որ՝

1) Երևան քաղաքի վարչական տարածքում գործում է համայնքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն (այսուհետ՝ միասնական ծառայություն), որի շրջանակներում միասնական ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարը վճարված լինելու դեպքում անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով օգտվում են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից.

2) Միասնական ծառայության տեղական վճարները գանձում է համայնքը՝ տրանսպորտային միջոցներում տեղադրված համապատասխան սարքերի կամ օրենսդրությամբ նախատեսված վճարումն ընդունող այլ միջոցներով.

3) Ուղևորները միասնական ծառայությունից օգտվում և միասնական ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարի վճարումն իրականացնում են Երևան քաղաքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների հետևյալ տեսակի տոմսերի ձեռքբերմամբ.

ա. «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ.

բ. «180 րոպե» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

գ. «180 րոպե» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

դ. «1 օր» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ե. «1 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

զ. «7 օր» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

է. «7 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ը. «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ.

թ. «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ.

ժ. «30 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժա. «30 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային

միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժբ. «90 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժգ. «90 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժդ. «365 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժե. «365 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժզ. ««Զվարթնոց» օդանավակայան» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ.

ժէ. ««Զվարթնոց» օդանավակայան» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ:»:

3) Ուղևորները պարտավոր են տրանսպորտային միջոց մուտք գործելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում վավերացնել (տրանսպորտային միջոցում տեղադրված համապատասխան սարքի միջոցով հաստատել տեղական վճարը վճարված լինելու կամ զրոյական դրույքաչափի կիրառմամբ կամ կիրառման արտոնությամբ փոխադրվելու իրավունք ստացած լինելու հանգամանքը) տեղական վճարի վճարման կրիչը (համապատասխան քարտը, էլեկտրոնային կտրոնը և այլն) և մինչև ուղևորության ավարտն իրենց մոտ պահպանել վավերացված կրիչը և տեղական վճարի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց պահանջի դեպքում տրամադրել այն տեղական վճարի վճարումը և վավերացում կատարված լինելու հանգամանքն ստուգելու նպատակով, որը չներկայացնելու բացասական հետևանքները կրում է ուղևորը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2025թ. _____ « »
Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՆԵԼՈՒ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշմամբ Երևան քաղաքի ավագանու կողմից հաստատվել էր Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը:

2025 թվականի հուլիսի 3-ին ընդունվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-203-Ն օրենքը, որով համայնքի վարչական տարածքում որպես տեղական վճար սահմանվել է համայնքի վարչական տարածքում կանոնավոր փոխադրումները տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) իրականացնելու դեպքում կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու դիմաց վճարը:

Նույն փաթեթով փոփոխություն է կատարվել նաև «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում, որի 11.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է, որ համայնքի վարչական տարածքում կանոնավոր փոխադրումները տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն և այլն) իրականացվելու դեպքում տվյալ համայնքի ավագանու որոշմամբ կարող է ներդրվել համայնքի վարչական տարածքում կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն և սահմանվել նշված միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարը, այն վճարելու եղանակը և տրանսպորտային միջոցում վավերացնելու կարգը:

Երևան քաղաքի վարչական տարածքում կանոնավոր փոխադրումները իրականացվում են տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն):

Երևան քաղաքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի իրականացվող բարեփոխումների շրջանակներում Երևան քաղաքը ձեռք է բերում հասարակական տրանսպորտի անհրաժեշտ շարժակազմ՝ գործող երթուղային ցանցում առկա

իրավիճակը կարգավորելու և նոր երթուղային ցանցին անցում կատարելու համար: Նշված շարժակազմի ձեռք բերումը անհրաժեշտ է առկա հնամաշ տրանսպորտային միջոցների փոխարինման, արդյունավետ, անվտանգ և հարմարավետ ուղևորափոխադրում իրականացնելու համար: Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի փուլային ձևով իրականացվող բարեփոխումների շրջանակներում կարևորվում է ոչ միայն հասարակական տրանսպորտի փոխարինմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, այլ դրան զուգընթաց՝ հասարակական տրանսպորտի սպասարկմանն ուղղված բարեփոխումների ամբողջական ծրագրի իրականացումը, այն է՝ միասնական տոմսային համակարգի ներդրումը:

Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքում ներդնել ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն, որի շրջանակներում միասնական ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարը վճարված լինելու դեպքում անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով օգտվում են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ